

07.09.2015

ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանն աշխատանքային այցով եղել է Չարենցավան քաղաքում: Մարզի ղեկավարը Չարենցավանի քաղաքապետ Հ. Շահգալոյանի և մարզպետարանի պաշտոնատար անձանց ուղեկցությամբ ծանոթացել է պետական ֆինանսավորմամբ քաղաքի ներհամայնքային փողոցներում և բակերում իրականացվող ասֆալտապատման աշխատանքների ընթացքին: Կոտայքի մարզպետը եղել է արդեն իսկ ավարտուն ասֆալտապատված տարածքներում, ինչպես նաև շրջել դեռևս ասֆալտապատման ընթացքի մեջ գտնվող հատվածներում:

Կ. Գուլոյանը զրուցել է համապատասխան կազմակերպության պատասխանատուների հետ և հանձնարարել է ապահովել որակյալ աշխատանք:

Կոտայքի մարզպետը զրուցել է նաև քաղաքի բնակիչների հետ, ովքեր իրենց գոհունակությունն են արտահայտել պետական աջակցությամբ իրականացվող այս կարևոր ծրագրի վերաբերյալ:

Այնուհետև Կոտայքի մարզպետը ծանոթացել է Չարենցավան քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի մասնաշենքում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող հիմնանորոգման աշխատանքների ավարտական փուլին:

Այստեղ ևս շինարարության պատասխանատուներին հանձնանարվել է ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ հիմնանորոգումը որակյալ կերպով և սահմանված ժամկետներում ավարտելու ուղղությամբ: Մարզպետը շինարարների հետ քննարկել է նաև կրթօջախի բակի բարեկարգման հետ կապված մի շարք հարցեր ևս: